



Մ Ա Յ Ր Հ Ա Յ Ր Ե Ն Ի Ք Ո Ւ Մ

ԼՈՒՐԵՐ ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻՔԻՑ

ՀՈՐԵԼՅԱՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ.— Լրանում է մեր ռեսպուբլիկայի 40 տարին: Հայաստանի պետական հրատարակչությունը պատրաստվում է արժանավայել դիմավորել այդ հոբելյանը: 1960 թվականի թեմատիկ պլանով նախատեսված է հրատարակել բազմաթիվ գրականություն՝ նվիրված Հայաստանի 40-ամյակին:

Պետհրատի քաղաքական գրականության խմբագրությունը հրատարակության է պատրաստում Գ. Հարությունյանի «Սովետական Հայաստանը 40 տարում» գիրքը: Գրքում ժամանակագրական կարգով շարադրված է Սովետական Հայաստանի համառոտ պատմությունը: Տպագրության են պատրաստվում նաև Զ. Գրիգորյանի «Հայ և ռուս ժողովուրդների բարեկամությունը» գիրքը, Ա. Գրիգորյանի «Հայաստանի բանվոր դասակարգը 40 տարում» աշխատությունը և այլն:

Հոբելյանական հրատարակությունների հարուստ ծրագիր ունի գիտատեխնիկական գրականության խմբագրությունը: Լույս կտեսնեն Վ. Համբարձումյանի «Սովետական Հայաստանը 40 տարում», «Գիտությունը Սովետական Հայաստանում», Զ. Սիմոնյանի «Մեքենաշինության և սարքաշինության զարգացումը Հայաստանում», Ա. Խրիմյանի «Առողջապահության նվաճումները Սովետական Հայաստանում», Գ. Բաղդամյանի «Քիմիական արդյունաբերության զարգացումը Հայաստանում» գրքերը, պատկերազարդ «Նրևան» ալբոմը և այլն:

«Հայաստանի գյուղատնտեսությունը 40 տարում» Այս վերնագիրն է կրում Ա. Այրումյանի և Մ. Շահբազյանի գիրքը, որը տպագրության է պատրաստում գյուղատնտեսական գրականության խմբագրությունը: Գրքում համառոտակի նկարագրված է Հայաստանի գյուղատնտեսությունը՝ Սովետական իշխանության հաստատումից առաջ, և նրա սոցիալ-քաղաքական վի-

րափոխումն ու զարգացման հեռանկարները Սովետական իշխանության տարիներին:

40-ամյակի պատվին Պետհրատի գեղարվեստական գրականության բաժինը նախապատրաստել է գեղարվեստական գրականության մի քանի ժողովածուներ: «Սովետահայ գրականության ընտիր էջեր» եռահատոր ժողովածուն ամփոփում է սովետահայ բանաստեղծների մի շարք ընտիր երկեր, իսկ «Սովետահայ դրամատուրգիայի ընտիր էջեր» ժողովածուում տեղ կգրտեն սովետահայ դրամատուրգիայի լավագույն պիեսները:

Լույս են տեսնելու նաև սովետահայ արձակի ընտիր երկերի ժողովածուներ, քուրդ գրողների երկերի ժողովածուն և «Գրական Հայաստան» (ազրբեջաներեն) ժողովածուն:

«Հուշարձան» վերնագրով հատուկ ժողովածու է հրատարակվելու՝ նվիրված քաղաքացիական կռիվների տարիներին զոհված բանաստեղծներին:

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԱՐԺԵՔԱՎՈՐ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆ.— ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի Լեզվի ինստիտուտի հրատարակությամբ ռուսերեն լեզվով լույս է տեսել պրոֆ. Հ. Կուսիկյանի «Գրական հայերենի պատմական շարահյուսության ակնարկներ» աշխատությունը, որն իր տեսակի մեջ առաջինն է հանդիսանում:

Հեղինակը իր առաջ խնդիր է դրել ցույց տալ ժամանակակից հայերենի շարահյուսական կառուցվածքի զարգացման ուղին և որոշել այն ընդհանրություններն ու տարբերությունները, որ երևան է հանում նա իր նախորդ շրջանների համեմատությամբ:

Աշխատությունն սկսվում է վիպասանական հայերենի (Գողթան երգերի), այսինքն հին հայ ժողովրդական բանահյուսության նմուշների շարահյուսական կառուցվածքի քննությամբ: Դրան հաջորդում է Ե դարի մա-

տենագրութեան լեզվի շարահյուսութեան քննութիւնը, որն իր արծարծած հարցերով, ճիշտ ու տեղին մեկնաբանութուններով կազմում է գրքի ծավալուն և ծանրակշիռ մասը: Այս հեղինակը զբաղւում է հունարեն գաղտնի և Զ—ԺԲ դարերի մատենագրութեամբ:

Նշելուց հետո միջին հայերենի շարահյուսական առանձնահատկութիւնները, Հ. Կուսիկյանն անցնում է ժամանակակից հայոց լեզվին: Նա արդարորեն ժխտում է այն կարծիքը, ըստ որում ժամանակակից հայերենի շարահյուսական կառուցվածքը ամբողջապէս հակադիր է գրաբարի կառուցվածքին: Իր աշխատութիւնը շարագրելիս պրոֆեսորը միանգամայն կանգնում է ճիշտ ուղու վրա, երբ հայերենի պատմական շարահյուսութեան հարցերը քննելով հաշվի է առնում ոչ միայն հայերենի լեզվադարգացման շրջանների առանձնահատկութիւնները, այլև այն կրող ժողովրդի պատմական կյանքի պայմանները:

Պրոֆ. Հ. Կուսիկյանի այս աշխատութիւնը շատ շնորհակալ մի ներդրում է հայագիտութեան ասպարեզում, ողջունելի և գնահատելի մի ձեռնարկ, թե՛ իր տեսական և թե՛ իր գործնական արժեքով: Փափակելի է, որ այն հրատարակվի նաև հայերեն:

ՆՈՐ ԳՐՔԵՐ.— 1) «Հայ ժողովրդական ճեմարան», 2-րդ հատոր: Ընթերցող հասարակայնութեան շերտ ուշադրութեան էր արժանացել «Հայ ժողովրդական հեքիաթներ»-ի 1-ին հատորը, որին հաջորդում է այս 2-րդը: Այս գրքում տեղ են գտել անվանի բանահավաք Տ. Նավասարդյանի «Հայ ժողովրդական հեքիաթներ»-ի 1—10 գրքերում տպագրված և 11-րդ անտիպ գրքում զետեղված Վաղարշապատի հեքիաթները: Դրանց շարքը՝ ճոխացված է բազմալատակ ազգագրագետ-բանահավաք Ե. Լալայանի հավաքած Վաղարշապատի հեքիաթներով:

2) «Նրեանի պատմութիւն, 1801—1879 թ. թ.»։ Աշխարհի հնագույն քաղաքներից մեկն է մեր սիրելի մայրաքաղաք Նրեանը, որը հիմնված է մեր թվարկութիւնից մի քանի հազարամյակ առաջ: Հայաստանի երբեմնի հռչակված մայրաքաղաքներ ավերակ են այսօր կամ վերածված երկրորդական նշանակութիւն ունեցող քաղաքների, բայց Նրեանը զեղեցկանում, զարգանում ու զարդարվում է օրավուր, ու մեծանում, դառնում է հայութեան բաբախուն ու շին սիրտը: Նրեանի իր բացառիկ ծաղկման վերելքն է ապրում մանավանդ մեր այս օրերին: Թ. և. Հակոբյանի «Նրեանի պատմութիւն»-ը ընդգրկում է Նրեանի 1801—1879 թվականների պատմութիւնը: Գիրքը

լույս է ընծայել Նրեանի պետական համալսարանի հրատարակչութիւնը: Աշխատութիւնը բաղկացած է երկու մասից՝ ա) 1801—1828 թ. թ. պարսկական շրջան և բ) 1828—1879 թ. թ. ռուսական շրջան: Ցուրաքանչիւր գլխում խոսվում է վարչական կարգի, տնտեսական կյանքի, բնակչութեան, քաղաքի ներքին կյանքի ու մշակութի մասին: Գրքում ընդարձակ կերպով տրված է նաև 1828 թվականին Նրեանի ազատագրման պատմութիւնը պարսկական լծից:

ՀԱՅԿՈՐ ՄԵՆԴԱՊԱՐՏԻ ՔԱՆԴԱԿԱՆ.— 1512 թվականին լույս է տեսել առաջին հայ տպագիր գիրքը՝ ձեռագիր Մեղապարտ Հակոբի Համարյա ուշին չգիտենք նրա մասին: Հակոբ Մեղապարտի դիմակարը ավանդաբար հասել է մեզ մի քանի պղնձյա փորթիկ դիմաքանդակներով, որից մեզ նայում է փառահեղ ալեգորդ մի դեմք: Ներկա քանդակը գործն է Գրիգոր Ահարոնյանի, որը ցուցադրութեան է դրվելու Հայաստանում սովետական կարգեր հաստատվելու 40-ամյակին նվիրված ցուցահանդեսում, որից հետո տեղափոխվելու է իր հատուկ տեղը Մատենադարանի շէնքում: Արվեստագետը առաջին հայ տպագրիչին պատկերացրել է տպագրական մեքենայի առաջ կանգնած, առաջին տպագրական թերթիկը իր դողողուն մատների միջև սեղմած, հայացքում անսահման հետաքրքրութիւն, հուզում և հպարտութիւն: Նրա խելացի, պարզ ու խիստ հայացքը, թալ մորուքը, վաճառականի անպաճույճ հագուստները բարեկամ ու միջին տարիքի մի մարդ են ստեղծում մեր աչքի առաջ, իր գործի մեծութեան գիտակցութիւնից ճառագայթող լուսավորված դեմքով: Քանդակի տպավորչութիւնը ավելանում է զուսպ և թեթև ընդգծված զարդաքանդակներով և առաջին տպագիր գրքից մի քանի տողի փորագրութեամբ: Այս արձանը մին է արձանների այն հոյակապ շարքից, որը զարդարելու է Մատենադարանը, ներկայացնելով հայ գրքի և մշակութի վաստակավորների՝ Խորենացու, Շիրակացու, Ռոսլինի, Գոշի և ուրիշների արձանների և քանդակների մի ամբողջութիւն:

ԿՈՒՆՏՈՒՐԱՅԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ ՆՐԵԱՆՈՒՄ.— Հունվար ամսին Նրեանի Դերասանի տանը, հանդիսավոր իրադրութեան մեջ, տեղի ունեցավ Կուստուրայի համալսարանի բացումը: Ներածական խոսքով առաջինը հանդես եկավ Կուստուրայի նորաստեղծ համալսարանի ռեկտոր Ռուբեն Զարյանը:

Համալսարանի գործունեութեան մասին ելույթ ունեցան թատրոնի և կինոյի գծով ռեկտորի տեղակալ Գուրգեն Զանդեկյանը, արվեստի դեմո տեղակալ Ա.

րա Սարգսյանը, ճարտարապետության գծով տեղակալ Միքայել Մազմանյանը:

Առաջին օրը դասախոսեց բանասիրական գիտությունների թեկնածու Սուրեն Հարությունյանը «Արվեստի խնդիրները» թեմայով: Կուլտուրայի համալսարանի առաջին և երկրորդ խմբերում ընդգրկված են 180 ունկնդիրներ: Պարապմունքները տեղի կունենան ամիսը երկու անգամ:

40-ամյակի առթիվ կազմակերպվող հոբելյանական ցուցահանդեսին Այս մեծ կտավին զուգընթաց նա աշխատում է նաև մի ուրիշ նկարի վրա, որը կուղում է «Մեր գյուղում», որի նյութը մեր օրերն են, սովետական գյուղը: Նկարիչը մտադիր է այդ նկարը ավարտել և ուղարկել Մոսկվա՝ առաջիկայում այնտեղ բացվելիք ցուցահանդեսի համար: Ա. Բեքարյանը վերջին շրջանում մեծ ներշնչումով աշխատում էր «Քաջ



ԿՈՄՊՈԶԻՏՈՐ ԶԻՎԱՆ ՏԵՐ-ԹԱԴԵՈՍՅԱՆԸ (ԿԵՆՏՐՈՆՈՒՄ) ԵՎ ԴԻՐԵԺՈՐ ՕԶԱՆ ԴՈՒԹՅԱՆԸ (ՁԱԽՈՒՄ) ԶՐՈՒՅՑԻ ԺԱՄԱՆԱԿ

ՆԿԱՐԻՉ ԱՐԱ ԲԵՔԱՐՅԱՆԻ ՆՈՐ ԿՏԱՎՆԵՐԸ.— Այս տարի մեծ շուքով պետք է տոնվի Հայաստանում սովետական կարգերի հաստատման 40-ամյակը: Այդ տոնը հաջող դիմավորելու համար եռանդուն կերպով նախապատրաստվում են նաև Հայաստանի նկարիչները, որոնց նպատակն է իրենց նոր կտավներում արտացոլել 40 տարիների ընթացքում կատարված վիթխարի տեղաշարժերը:

Նկարիչ Արա Բեքարյանի վերջին աշխատանքը կուղում է «1920 թվական—Հայաստան», որը պատկերում է Կարմիր Բանակի մուտքը Երևան: Այդ աշխատանքը նկարիչը ներկայացնելու է Սովետական Հայաստանի

Նաղար» հայկական ժողովրդական ստեղծագործական թեմայով կատարվող գրաֆիկական աշխատանքների սերիայի վրա, որն արդեն ավարտել է:

«ՄԱՐԴՈՒ ԾԱԿԱՏԱԳԻՐԸ» ՍԻՄՖՈՆԻԱՆ.— Երիտասարդ և շնորհալի կոմպոզիտոր Զիվան Տեր-Թադեոսյանի երկրորդ սիմֆոնիան գրված է Շոբյուսովի նույնանուն պատմվածքի թեմայով: Հայֆիլհարմոնիայի մեծ դահլիճում Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբը, տաղանդավոր դիրիժոր Օհան Դուրյանի ղեկավարությամբ, հաջողությամբ կատարեց այս ուշաշագրավ ստեղծագործությունը, որն աչքառու մի հաջողություն էր որպես աշխատություն և որպես կատա-

բողական վարպետութիւն, արժանանալով ունկնդիր-ներէր անվերապա՝ գնահատանքին:

Սիմֆոնիան բաղկացած է հինգ մասից: Առաջին մասը նախերգանքն է, սովետական մարդու վառ հայրենասիրութեան նվիրված: Երկրորդ մասը նվիրված է սովետական մարդու խաղաղ, աշխատանքային սիրագործութիւններով լի առօրյային: Մարդիկ շնն էլ կասկածում միջ մեջ իրենց սպասող արհաւիրքների մասին: Երրորդ մասում պատկերվում են հերոսի ունեցած մտքումները և ապրումները Հայրենիքի ճակատագրի, նրա մարդկանց ու բնութան մասին: Նվագախմբի հետ ջութակի մենանվագը հաջող կերպով տալիս է այն բարդ ապրումները, որոնք կուտակվել են հերոսի հոգում, բախտորոշ այդ օրերին: Զույգակի մենանվագը կատարեց Հայկական ՍՍՌ վաստակավոր արտիստ Բ. Չալոբանյանը: Զորքորդ մասը պատկերում է պատերազմի արհաւիրքները, ցնցող պատկերներով: Այս մասը սիմֆոնիայի դրամատիկական գագաթն է: Հինգերորդ մասը վերջաբանն է, լիրիկական մի էպիլոգ, հազեցված սովետական մարդու անհաղթահարելի լավատեսութեամբ: Դառնութիւնները ցմրուր քամած, բայց երբեք չհուսահատված, անհերք և միշտ լավագույնին ձգտող, իր Հայրենիքի հաղթանակին և լավագույն գալիքի նկատմամբ լիաճույս մարդու զգացմունքներն ու ապրումներն են խտանում այստեղ:

ԱՆՏՈՆ ՊԱՎԼՈՎԻՉ ՉԵԽՈՎԻ ՄՆԵՆԴԵԱՆ 100-ԱՄՅԱԿԸ.— Խաղաղութան Համաշխարհային Խորհրդի որդի մամբ հունվարի 29-ին բոլոր երկրներում նշվեց ռուսականավոր գրող Անտոն Պավլովիչ Չեխովի ծննդյան 100-ամյակը:

Չեխովը, ինչպես բոլոր խաղաղասեր ժողովուրդների, այնպես էլ հայ ժողովրդի սիրելի գրողներից մեկն է:

1897 թվականին «Մուրճ»-ում առաջին անգամ լույս է տեսնում Չեխովի «Երկն» պատմվածքը: Հետագայ տարիներին այդ ամսագրի էջերում հրատարակվում են «Տանը», «Փորձանք», «Օտար երկրում», «Թշնամիներ» և ուրիշ ստեղծագործություններ: Չեխովի գործերը հայերեն ամենից շատ թարգմանվել և հրատարակվել են «Նոր-դար»-ում: 1900—1902 թվականներին այդ լրագրում հրատարակվել են Չեխովի 50-ից ավելի գրվածքները:

Առանձին գրքերով Չեխովի երկերը հայերեն սկսել են հրատարակվել 1902 թվականից: Սակայն նրա երկերը չքիչ ու ծավալուն հրատարակություն ունեցան սովետական տարիներին: Վերջին մի շարք տարիների ընթացքում հրատարակվել է մոտ 10 գիրք:

Գեղարվեստական խոսքի մեծ վարպետ Ա. Պ. Չեխովի ծննդյան 100-ամյակի առթիվ նրա գործերը պատ-րաստված են հայերեն տպագրության 5 հատորով: Հունվարի 29-ին Գ. Սունդուկյանի անվան պետական դրամատիկական թատրոնում տեղի ունեցավ հո-բեյանական հանդեսավոր նիստ՝ նվիրված Ա. Պ. Չեխովի ծննդյան 100-ամյակին: Նիստը բացեց Հայաստանի Սովետական գրողների միության վարչու-թյան քարտուղար Հ. Հովհաննիսյանը: Ա. Պ. Չեխովի ստեղծագործության մասին զեկուցեց գրող Հրաչ-յա Փոշարը: Երեկոյի վերջում ներկայացվեցին Չեխովի «Բայնու ալգին» և «Երեք քույրեր» պիեսներից տեսարաններ:

ՊՐՈՖ. ՔՐԻՍՏԱՓՈՐ ՄՏԵՓԱՆԻ ՔՈՒՇՆԵՐՅԱՆԻ ՄԱՀԸ.— Հունվարի 25-ին, Լենինգրադում, հանկարծա-մահ եղավ սովետահայ երաժշտագիտության խոշորագույն ներկայացուցիչ, կոմպոզիտոր, երաժշտական-հասարակական գործիչ, երկարամյա մանկավարժ պրոֆ. Քրիստափոր Ստեփանի Քուշներյանը:

Հանգուցյալը ծնվել է 1890 թվականի հունիսի 5-ին Սիմֆերոպոլում: 1916 թվականին ավարտել է Պետեր-բուրգի համալսարանի բնական գիտությունների բա-ժանումները, իսկ 1925 թվականին՝ Լենինգրադի Կոն-սերվատորիայի ստեղծագործական դասարանը: Նա մանկավարժական բեղուն գործունեություն է ունեցել՝ որպես հմուտ տեսարան երաժշտության և կոմպոզի-ցիայի դասատու:

Պրոֆ. Քուշներյանի գրչին են պատկանում բազմա-թիվ երաժշտական ստեղծագործություններ: Նրա գի-տահետազոտական աշխատություններից է «Հայկա-կան մոնոտիկ երաժշտության պատմության և տե-սուլյան հարցեր» ծավալուն մենագրությունը, որտեղ, սկսած վաղ օրերից մինչև մեր օրերի հայ ժողովրդա-կան երաժշտության պատմությունը շարադրվեց, բազ-մաթիվ տեսանկյուններից լուսավորելով այն: Հարցե-րի ընդգրկման լայնությամբ և գիտական խորու-թյամբ աչքի ընկնող այս աշխատությունը բացառիկ մի երևույթ էր սովետական ողջ երաժշտության մեջ: Հարգելի արվեստագետը պատրաստել է խոստում-նալից երաժշտագետների մի նոր սերունդ:

Պրոֆ. Քուշներյանը Հայկական ՍՍՌ և Ուղբեկա-կան ՍՍՌ վաստակավոր գործչի կոչում ուներ, ար-ժանացել էր բազմաթիվ մեդալների և ջրանշանների: Նա ճանաչված հեղինակություն էր սովետական երա-ժշտական աշխարհում: Նա միաժամանակ մարդկա-լին բարձր առաքինությունների մարմնացումն էր, վերին աստիճանի սրտացավ և հոգատար ուսուցիչ,

երիտասարդության բարեկամն ու խորհրդատուն, բարության և ազնվության մարմնացումը, անկաշառ հայրենասեր:

Վերջին շրջանում պրոֆ. Ք. Քուշներյանը իր խորհուրդներով մեծապես օգտակար եղավ Վենետիկում Հայրապետի ցանկությանը Մայր Աթոռում կազմված հայ Շարականոցը հվրոպական ձայնախմբի վերածնունդ և ապա հրատարակության պատրաստելու գործին, որպես նախագահ Շարականոցի հրատարակության կենտրոնական հանձնաժողովի:

ՈՒՇԱԳՐԱՎ. ԿԻՆՈՆԿԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔՐԴԵՐԻ ՄԱՍԻՆՁ.— Վերջերս Հայաստանում, այս է տիտղոսը Սովետական Հայաստանում ապրող քրդերին նվիրված գեղարվեստական գովումներում կինոժապավենի, որը պատկերում է քուրդ ժողովրդի 40 երջանիկ տարիները սովետական իշխանության ներքո Հայաստանում, հարազատ Արագածի գեղածիծաղ լանջերին:

Նկարը բացվում է քուրդ հովվի արտագրավ սրնգի դալալով, որը գալիս է Արագածի դուրբի լանջերից, երգ, որը հյուսվել է վերածնված քուրդ ժողովրդի կողմից Արագածի արևաշող հովուցներում, նոր արևի հետ կյանք ստացած քուրդ երջանիկ ժողովրդի կյանքի 40-ամյակի արշալույսին:

Արագածի հմայիչ բնության ֆոնի վրա պատկերված

են աշխատասեր քուրդ ժողովրդի նվաճումները, նրա երջանիկ առօրյան:

Արագածի բարձունքին խաղաղ ու բարգավաճ կյանքով ապրող ընդունակ քուրդը հիմա հնարավորություն ունի աշխատելու գիտության և կուլտուրայի օջախներում, գործարաններում, նվաճելու փորձ ու արժեք կյանքի բազմաթիվ բնագավառներում: Երևանի և միութենական շատ ուրիշ քաղաքների բուհերում սովորում են բազմաթիվ ընդունակ և կենսուրախ քուրդ երիտասարդ աղջիկներ և տղաներ:

ԿԻՆՈՆԿԱՐ ՀԱՅՐԵՆԱԳԱՐՁՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ.— «Հայրենի հողի վրա» հատկանշական անունն է կրում վերջերս պատրաստված այն կինոնկարը, որը պատկերում է հայրենադարձության հուզիչ դրվագները և հայրենադարձների մասնակցությունը Հայրենիքի վերակառուցման աշխատանքներում: Կինոնկարի ռեժիսորն է Գ. Բալասանյանը, օպերատորը՝ Ն. Սիմոնյանը: Ակնարկը հետաքրքիր ու գրավիչ է, մանավանդ որ ֆիլմը գունավոր է:

Կինոնկարում պատկերված են գեղածիծաղ Երևանի նորագույն արվարձաններից կենսուրախ կերպով ծաղկող նոր Արենշը, Նոր Մարաշն ու Նոր Կլիկիան, որոնք կառուցվել են առավելապես հայրենադարձների ձեռքով: Ծուռով այս կինոնկարը կցուցադրվի մայրաքաղաքի կինոթատրոնների էկրանների վրա:

